

**ԽՈՇՈՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՐԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Կառլեն Խաչատրյան

Տնտեսագիտության թեկնածու
ԵՊՀ կառավարման և գործարարության ամբիոն
ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան 1
Էլ. հասցե՝ karlen.khachatryan@ysu.am

Վարդան Ալեքսանյան

Տնտեսագիտության թեկնածու
ԵՊՀ կառավարման և գործարարության ամբիոն
ՀՀ, Երևան, Ալեք Մանուկյան 1
Էլ. հասցե՝ vardan.aleqsanyan@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 10.04.2022, գրախոսվել է 22.05.2023, ընդունվել է տպագրության 07.08.2023
DOI: 10.53548/0320-8117-2023.2-87

Ներածություն

Հարկերն արտացոլում են բնակչության, տնտեսավարող սուբյեկտների և պետության միջև հարաբերությունների կարգավորվածության աստիճանը, երկրի կայունության ապահովման և պետական գործառույթների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների կենտրոնացման հիմնական գործիքն են: Հարկումը, որն ուղղակիորեն ազդում է սպառման, արտադրության և բաշխման վրա, հետապնդում է տնտեսական առաջընթացի ապահովման և հասարակության բարեկեցության բարձրացման նպատակ: Եթե նախկինում հարկերը դիտարկվել են միայն որպես պետության եկամտի ձևավորման աղբյուր, ապա ներկայումս համարվում են նաև հասարակական հարաբերությունների վրա ազդեցության գործիք և պետության կողմից կիրառվում են գիտատեխնիկական առաջընթացի, ձեռնարկատիրության, արտադրության զարգացման վրա տնտեսական ներգործություն իրականացնելու նպատակով: Ժամանակակից աշխարհում հարկերի նկատմամբ աճող հետաքրքրությունը մեծապես պայմանավորված է այն բանով, որ դրանք շոշափում են հասարակության գրեթե բոլոր շերտերի շահերը: Բացի այդ, հարկերը կանխորոշում են երկրի տնտեսության զարգացումը, քանի որ միայն արդյունավետ հարկային համակարգի ներդրման և գործարկման դեպքում է հնարավոր ապահովել տնտեսական աճ, ստեղծել կայուն ֆինանսական համակարգ, խթանել ձեռնարկատիրությունը և գործա-

րար ակտիվությունը, լուծել տարաբնույթ սոցիալական խնդիրներ: Բազմաթիվ տնտեսագետներ բազմիցս ուսումնասիրել են հարկերը, անդրադարձել հարկման խնդիրներին և փորձել նախանշել որոշակի լուծումներ: Ըստ Ա. Սմիթի՝ հարկը պետական ծառայությունների դիմաց կատարվող վճարի արդարացի գինն է¹:

Հարկային մուտքերի դինամիկայի, դրանց կառուցվածքի վերլուծությունը վեր է հանում առկա խնդիրները, ինչն էլ հնարավորություն է տալիս կատարելագործելու հարկային համակարգը, ավելացնելու հարկային եկամուտների ծավալը, ինչպես նաև նպաստելու հարկային բեռի արդարացի բաշխմանը: ՀՀ խոշոր հարկ վճարողները, ապահովելով հարկային մուտքերի ավելի քան 70%-ը, հարկային համակարգում կատարվող բարեփոխումների տեսանկյունից ունեն մեծ դերակատարություն: Սա է պատճառը, որ կարևորվում է հարկային վարչարարության արդյունավետության բարելավման միջոցով պետական բյուջեի եկամուտների կայուն ավելացումը:

Հոդվածի նպատակն է ՀՀ-ում խոշոր հարկատուների հարկման խնդիրներն ու հարկային վարչարարության կատարելագործման ուղիները բացահայտելը:

Վերջին տարիներին ՀՀ-ում հարկային եկամուտների աճը հիմնականում եղել է տնտեսական աճի, հարկային և մաքսային վարչարարության արդյունավետության բարձրացման, ստվերային շրջանառությունների հարկման հաշվին: Չնայած իրականացված որոշակի քայլերին, այդուհանդերձ, էական առաջընթաց չի նկատվում հարկային եկամուտների կառուցվածքի բարելավման ուղղությամբ:

Գրականության ակնարկ

Սոցիալ-տնտեսական զարգացման գործում չափազանց կարևոր է հարկային քաղաքականության և հարկային համակարգի դերը, քանի որ դրանց արդյունավետության շարունակական բարձրացումը հանգեցնում է պետական եկամուտների ավելացման, ներդրումային քաղաքականության աշխուժացման, պետական կարևորագույն ծրագրերի իրագործման և տնտեսական ու կայուն տեմպերի ապահովման:

Հարկերը տնտեսական քաղաքականության առանցքային գործիքներից են, որոնք ուղղակիորեն ազդում են վերաբաշխման վրա: Հատկապես վերջին կես դարի ընթացքում եղած բավականաչափ հետազոտությունները դիտարկում են ընկերության չափերի և արդյունավետ հարկային դրույքաչափի փոխկապակցվածությունը²: Ընդ որում, արդյունավետ հարկային դրույքաչափի քննարկումները բավական արդիական են գլոբալացման գործընթաց-

¹ Smith 1937, 825.

² Belz, Hagen, Steffens 2019, 2.

ների համատեքստում, քանի որ խոշոր վերազգային կորպորացիաները որևէ երկրում մեծ ներդրում կատարելու համար երբեմն հարկային արտոնություններ են ստանում³: Օրինակ, ԱՄՆ-ում 2018 թ. ոչ ռեզիդենտների իրականացրած մասնավոր ներդրումների էական աճ է գրանցվել, ինչը որոշակիորեն կապված է եղել հարկերի կրճատման ծրագրի հետ⁴: Ավելին՝ զարգացած երկրները տասնամյակներ շարունակ մեծացնում են իրենց ներդրումները զարգացող տնտեսություններում, որն անխուսափելիորեն հանգեցնում է հարկային նորմերի փոփոխությունների⁵:

ՀՀ պետական բյուջեի եկամուտների շուրջ 95%-ը կազմում են հարկային եկամուտները և պետական տուրքերը⁶, իսկ հարկային եկամուտների ավելի քան 70%-ը ապահովում են խոշոր հարկատուները: Ուստի հարկային բարեփոխումների իրականացման տեսանկյունից առանձնահատուկ կարևորություն է տրվում խոշոր հարկատուների հարկման մեխանիզմների կատարելագործմանը: Բազմաթիվ երկրների փորձը ցույց է տալիս, որ խոշոր հարկատուների գործունեության վերահսկման հատուկ մեխանիզմների մշակումը հանգեցրել է հարկային մարմինների աշխատանքի արդյունավետության բարձրացմանը և հարկային օրենսդրության դրույթների խստորեն պահպանելուն: Նման մեխանիզմները հարկային մարմիններին թույլ են տալիս առավելապես կենտրոնանալ հարկային մուտքերի վրա էական ազդեցություն ունեցող հարկատուների համեմատաբար փոքր խմբի վրա՝ դրանով իսկ մեծացնելով հարկային եկամուտների ծավալը⁷:

Խոշոր կազմակերպությունների նկատմամբ հարկային մոնիթորինգի նոր ձևերի ներդրումը էապես բարձրացնում է պետության ազդեցության արդյունավետությունը և հնարավորություն է տալիս հավաքագրել կանխատեսվող հարկային մուտքերը: Արժույթի միջազգային հիմնադրամը իր 2019 թ. զեկույցում նշում է, որ խոշոր ընկերությունների նկատմամբ պրոգրեսիվ հարկի կիրառումը կարող է վերջիններիս շուկայական ազդեցությունը նվազեցնելու արդյունավետ միջոց լինել⁸: Բոլոր հետազոտություններն ու սիմուլյացիոն մոդելները ցույց են տալիս, որ կորպորատիվ հարկման ռեգրեսիվ մոտեցումները հանգեցնում են եկամուտների և առհասարակ հարստության կենտրոնացման հասարակության առավել բարեկեցիկ շերտերի մոտ⁹:

³ Farnsworth, Fooks 2015, 25.

⁴ Kopp, Leigh, Mursula, Tambunlertchai 2019, 6.

⁵ IMF, Corporate..., 48.

⁶ «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, հոդված 6:

⁷ Киреенко, Орлова, Баженова 2019, 112.


⁸ IMF, World... 2019, 69.

⁹ Piketty, Saez, Zucman 2018, 598-601.

Խոշոր հարկ վճարողների դերը ՀՀ հարկային համակարգում

Յուրաքանչյուր տարի ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը հրապարակում է 1000 խոշոր հարկատուների ցանկը, որից պարզ է դառնում, որ խոշոր հարկ վճարողների վճարած հարկերը կազմում են հարկային եկամուտների շուրջ 70-80%-ը: Եթե փոքր և միջին բիզնեսին հաճախ որոշակի արտոնություններ են տրվում, որպեսզի խթանվի վերջիններիս զարգացումը, ապա խոշոր հարկատուների նկատմամբ կիրառվող գործիքակազմի ընտրության հարցում պետք է առավելագույնս զգույշ լինել, քանի որ հարկային մարմնի կողմից կատարված՝ հարկային դրույքաչափերի, հարկային արտոնությունների կամ վարչարարության ցանկացած փոփոխություն կարող է հանգեցնել հարկային մուտքերի էական նվազման կամ աճի: Այսպիսով, խոշոր հարկատուների հարկային մուտքերի վերլուծությունը հնարավորություն է տալիս վեր հանել հարկային համակարգում առկա մի շարք խնդիրներ, որոնց լուծմամբ հնարավոր է ավելացնել հարկային մուտքերը:

Խոշոր հարկատուների հարկային մուտքերի վերլուծության համար որպես դիտարկվող ժամանակահատված է ընտրվել 2014-2021 թթ. շրջանը: 1000 խոշոր հարկ վճարողների ցանկի հրապարակման հարցում 2020 թ. ընթացքում մեթոդաբանության փոփոխություն է տեղի ունեցել, որի շնորհիվ 2020 թ. հրապարակվել է 1000 խոշոր հարկ վճարողների ևս մեկ ցանկ, որտեղ ներառվել են ոչ միայն տնտեսավարող սուբյեկտները, այլ նաև պետական կառավարչական հիմնարկները, այդ թվում՝ նախարարություններ, պետական գերատեսչություններ, ուստի վերլուծություններն իրականացնելիս հիմք են ընդունվել ինչպես նախկին, այնպես էլ նոր ցանկերը (գծ. 1):




Գծ. 1. 1000 խոշոր հարկ վճարողների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր ծավալը 2016-2021 թթ., մլրդ դրամ¹⁰

¹⁰ Բոլոր գծապատկերները կազմել են հեղինակները՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի հրապարակած՝ 2016-2021 թթ. 1000 խոշոր հարկ վճարողների կողմից վճարված հարկերի հաշվետվությունների հիման վրա:

2016 թ.-ից սկսած՝ նկատվում է հարկային մուտքերի աճ: Պատկերը փոխվում է 2020 թ.: Եթե դիտարկենք հարկ վճարողների ցանկը, որտեղ ներառված են միայն տնտեսավարող սուբյեկտները, ապա 2020 թ. 1000 խոշոր հարկ վճարողների կողմից պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծությունը կազմել է շուրջ 988 մլրդ դրամ, ինչը 6,9%-ով պակաս է նախորդ տարվա նույն ցուցանիշից: Մինչդեռ 1000 խոշոր հարկատուների ցանկը կազմելու մեթոդաբանության փոփոխության հետևանքով նկատվում է շուրջ 16 մլրդ դրամի աճ, ինչը 1,5%-ային կեսով ավել է, քան նախորդ տարվա ցուցանիշը: Հարկային մուտքերի աճ նկատվում է նաև 2021 թ.: Նշենք, որ հարկային մուտքերի աճը զուգակցվում է հարկեր/ՀՆԱ հարաբերակցության աճի հետ, որը պայմանավորված է ստվերային տնտեսության կրճատմամբ:


Եթե դիտարկում ենք 1000 խոշոր հարկ վճարողների ցանկը, որտեղ ներկայացված են միայն տնտեսավարող սուբյեկտները, ապա հարկային մուտքերի կազմում նրանց վճարած հարկերի տեսակարար կշռի նվազումն ակնառու է դարձնում COVID-19-ի և Արցախյան 44-օրյա պատերազմի հետևանքները թե՛ տնտեսական զարգացման, թե՛ հարկային մուտքերի մեծության վրա (գծ. 2):



Գծ. 2. 1000 խոշոր հարկ վճարողների ցանկում ներառված հարկատուների թվաքանակը՝ ըստ ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարի մեծության, 2016-2021 թթ.

Գծապատկեր 2-ում ներկայացված է խոշոր հարկ վճարողների քանակը՝ ըստ վճարած հարկերի մեծության: Մասնավորապես տեսնում ենք, որ 1 մլրդ դրամից ավել և 500 մլն դրամից մինչև 1 մլրդ դրամ հարկ վճարող ընկերությունների թվաքանակի աճի միտում կա, իսկ մինչև 200 մլն դրամ հարկ վճարող ընկերությունների թիվը 1000 խոշոր հարկատուների ցանկում 2016 թ.

445-ից 2021 թ. դարձել է 0: Հատկանշական է, որ եթե մինչև 2021 թ. 200 մլն դրամից քիչ հարկ վճարող ընկերությունների քանակը մի քանի հարյուր էր, ապա 2021 թ. 1000 խոշոր հարկատուների ցանկի վերջին հորիզոնականում գտնվող ընկերությունը վճարել է շուրջ 205,8 մլն դրամի հարկ: 2019 թ. 1000 խոշոր հարկատուների ցանկում ներառվելու համար պետք է վճարեին ավելի քան 168 մլն դրամի հարկ, 2018-ին՝ 138 մլն դրամից մի փոքր ավել: 2016 թ. ՀՀ-ում գործող 128 ընկերություն վճարել է 1 մլրդ. դրամից ավել հարկ, իսկ 2021 թ. այդպիսի ընկերությունների թիվն աճել է 70%-ով:



ՊՖ. 3. 1000 խոշոր հարկ վճարողների ցանկում ներառված հարկատուների վճարած հարկերի միջին մեծությունը 2014-2021 թթ., մլն դրամ


1 մլրդ դրամից ավել հարկերի հանրագումարը հարաբերելով 1 մլրդ դրամից ավել հարկեր վճարած ընկերությունների թվաքանակին՝ կատանանք, թե ընկերությունը, որի վճարած հարկերի շեմը բարձր է 1 մլրդ դրամից, միջին հաշվով որքան հարկ է վճարել: Համանման մոտեցմամբ 500 մլն դրամից մինչև 1 մլրդ դրամ հարկ վճարած ընկերությունների համար ևս կարելի է հաշվարկել նրանց վճարած հարկի միջին մեծությունը: Գծապատկեր 3-ից պարզ է դառնում, որ 500 մլն դրամից ավել հարկ վճարող ընկերությունների կողմից վճարվող հարկի միջին մեծությունը համեմատաբար կայուն է, այն էսպես չի տատանվում:

Դա նշանակում է, որ թեև կազմակերպությունների քանակը փոփոխվել է էականորեն, սակայն վճարվող հարկի միջին մեծությունը՝ ոչ:

Խոշոր հարկ վճարողների կողմից վճարված ուղղակի հարկերի դինամիկան

Հարկային մուտքերում ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցությունը շատ բան է ասում հարկային համակարգի, հարկային բեռի բաշխման


արդարացիության մասին: Ընդունված է այն տեսակետը, որ որքան մեծ է ուղղակի հարկի մասնաբաժինը, այնքան հարկային համակարգն արդյունավետ է, իսկ հարկային բեռի բաշխումը՝ առավել արդար: Օրինակ, Եվրոպայում XIX դ. վերջերին անուղղակի հարկերի տեսակարար կշիռը կազմել է շուրջ 2/3, իսկ XX դ. վերջին արդեն 1/3¹¹: 1000 խոշոր հարկ վճարողների ցանկում ընդգրկված ընկերությունների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր մեծության կառուցվածքում ուղղակի հարկերի (շահութահարկ և եկամտային հարկ) տեսակարար կշիռը 2016-2021 թթ. ժամանակահատվածում նվազման միտում է ունեցել (գծ. 4):



Գծ. 4. 1000 խոշոր հարկ վճարողների ցանկում ընդգրկված ընկերությունների կողմից ՀՀ պետական բյուջե վճարված ուղղակի հարկերի տեսակարար կշիռը վճարված հարկերի մեջ 2016-2021թթ., %

2016 թ. խոշոր հարկ վճարողների վճարած հարկերի մեջ ուղղակի հարկերը կազմել են 36,2%, իսկ 2021 թ. այդ ցուցանիշը նվազել է 2,1 տոկոսային կետով և դարձել 34,1%: Ընդ որում, խոշոր հարկ վճարողների վերջին հարյուրակի դեպքում ուղղակի հարկերի տեսակարար կշռի նվազումն ավելի կտրուկ է, քան առաջին հարյուրակինը: Մասնավորապես՝ եթե 2016 թ. առաջին հարյուրակի կողմից վճարված ուղղակի հարկերի տեսակարար կշիռը ընդհանուր հարկերում 34,9% է կազմել, իսկ վերջին հարյուրակի պարագայում՝ 39,9%, ապա 2021 թ. այդ ցուցանիշը կազմել է համապատասխանաբար՝ 32,6% և 34,5%: Այսինքն՝ ցուցակի առաջին հարյուրակի ընկերությունների պարագայում ցուցանիշն անկում է ապրել 2,3, իսկ վերջին հարյուրակի պարագայում՝ 5,4 տոկոսային կետով (գծ. 5):


¹¹ Соловьева 2017, 219.



Գծ. 5. 1000 խոշոր հարկ վճարողների ցանկում ընդգրկված ընկերությունների թիվը՝ ըստ ՀՀ պետական բյուջե վճարված ուղղակի հարկերի մեծության, 2016-2021 թթ.

2016-2018 թթ. 1 մլրդ դրամը գերազանցող ուղղակի հարկեր վճարած ընկերությունների թիվը տատանվում էր 46-52-ի միջակայքում, 2018 թ. սկսած՝ նկատվել է աճ՝ 2021 թ. դառնալով 74 ընկերություն: Գրեթե նույն միտումը տեսնում ենք նաև 500 մլն դրամից 1 մլրդ դրամ ուղղակի հարկեր վճարած ընկերությունների թվաքանակի պարագայում: 2016-2021 թթ. ընթացքում 500 մլն դրամից 1 մլրդ դրամ ուղղակի հարկեր վճարած ընկերությունների թիվն աճել է շուրջ 2,5 անգամ՝ 2016 թ. 41 ընկերությունից 2021 թ. դառնալով 100: Թեև կազմակերպությունների քանակն աճել է, այնուամենայնիվ, ցուցանիշը համադրելով խոշոր հարկատուների կողմից վճարված ուղղակի հարկերի ընդհանուր՝ խոշոր հարկատուներից հավաքագրված հարկային եկամուտների կազմում տեսակարար կշռի ցուցանիշի հետ՝ նկատում ենք, որ ուղղակի հարկերի տեսակարար կշիռը տարեցտարի նվազել է՝ ի հակադրություն կազմակերպությունների քանակի աճին:

1 մլրդ դրամից ավել ուղղակի հարկերի հանրագումարը հարաբերելով 1 մլրդ դրամից ավել ուղղակի հարկեր վճարած ընկերությունների քանակին՝ կստանանք, թե ընկերությունը, որի վճարած ուղղակի հարկերի շեմը բարձր է 1 մլրդ դրամից, միջին հաշվով որքան ուղղակի հարկ է վճարել: Նույն կերպ հաշվարկվել է նաև 500 մլն դրամից մինչև 1 մլրդ դրամ ուղղակի հարկեր վճարած ընկերությունների վճարած ուղղակի հարկերի միջին մեծությունը (գծ. 6): Գծ. 6-ից երևում է, որ 2016-2021 թթ. 1 մլրդ դրամից ավել ուղղակի հարկեր վճարած ընկերությունների վճարած ուղղակի հարկերի միջին մեծությունը, թեև որոշակի տատանողականություն է ունեցել, բայց այդուհանդերձ, դիտարկվող ժամանակահատվածում աճել է աննշան՝ ընդամենը 3%-ով: Իսկ 500 մլն դրամից մինչև 1 մլրդ դրամ ուղղակի հարկեր վճարած ընկերությունների վճարած ուղղակի հարկերի միջին մեծությունը նվազել է մոտ 5,5%-ով:



ՊՖ. 6. 1000 խոշոր հարկ վճարողների ցանկում ներառված հարկատուների վճարած ուղղակի հարկերի միջին մեծությունը 2016-2021 թթ., մլն դրամ

Եզրակացություններ

Չնայած COVID-19-ի և Արցախյան 44-օրյա պատերազմի հետևանքով առաջացած տնտեսական անբարենպաստ պայմաններին՝ խոշոր հարկ վճարողների հարկային մուտքերը 2020-2021 թթ. ընթացքում ավելացել են՝ պայմանավորված 2020 թ. 1000 խոշոր հարկատուների ցանկում մեթոդաբանության փոփոխությամբ, որի շնորհիվ տնտեսավարող սուբյեկտներից զատ, ցանկում ներառվել են նաև պետական կառավարչական հիմնարկները, գերատեսչություններն ու նախարարությունները: Կարծում ենք՝ նման մոտեցումը հնարավորություն չի տալիս օբյեկտիվ կարծիք կազմելու տնտեսությունում առկա իրավիճակի մասին, քանի որ դա արհեստականորեն մեծացնում է հարկային մուտքերի ծավալը: Թեև պետական և տեղական ինքնակառավարման մարմինները ևս հարկ վճարողներ են, այնուամենայնիվ, տնտեսության իրական պատկերն ընկալելու համար անհրաժեշտ է դիտարկել առևտրային կազմակերպությունների վճարած հարկային մուտքերի մեծության չափը:

Ճիշտ է, 1 մլրդ դրամից ավել և 500 մլն դրամից մինչև 1 մլրդ դրամ հարկ վճարող կազմակերպությունների քանակը տարեցտարի աճում է, այդուհանդերձ, էական տեղաշարժ չի նկատվում մեկ կազմակերպության վճարած հարկային մուտքերի միջին մեծությունում, որը մտահոգիչ է և կարող է վկայել ստվերային տնտեսության շոշափելի չափերի մասին:

Հաջորդ կարևոր խնդիրը հարկային մուտքերի կազմում ուղղակի հարկերի փոքր տեսակարար կշիռն է, որը վերջին տարիներին սկսել է նվազել: Սա վկայում է պետության կողմից իրականացվող հարկային վարչարարության անարդյունավետության մասին: Հայտնի է, որ անուղղակի հարկերի հավաքագրումը շատ ավելի «հեշտ» է. ըստ էության, դրանք ընկնում են վերջ-

նական սպառողի վրա, իսկ ուղղակի հարկերի դեպքում հարկատուն իր իրականացրած գործունեության ֆինանսական արդյունքից է վճարում հարկերը: Հատկանշական է այն փաստը, որ 1000 խոշոր հարկատուների ցանկում առաջին 100 կազմակերպությունների դեպքում ուղղակի հարկերի տեսակարար կշռի փոփոխությունը ընդհանուր հարկերի մեջ այնքան մեծ չէ, որքան վերջին 100-ինը: Դա ևս վկայում է հարկային վարչարարության անարդյունավետ իրականացման մասին:

Ուշագրավ է, որ խոշոր հարկատուների վճարած հարկերի ծավալի աճն ավելի մեծ է, քան պետբյուջեի հարկային եկամուտների աճը: Խոշոր հարկ վճարողների վճարած հարկերի աճի առաջանցիկ տեմպը ցույց է տալիս, որ նրանք ստվերից որոշակիորեն բերվել են հարկային դաշտ՝ առավելապես անուղղակի հարկերի մասով: Թեև խոշոր հարկատուների վճարած հարկերի ծավալն աճում է, այդուհանդերձ, նրանք «ծանրաբեռնված» չեն ուղղակի հարկերով: Այսինքն՝ 1000 խոշոր հարկատուների վճարած հարկերի ծավալների աճն առավելապես եղել է անուղղակի հարկերի հաշվին:

Այսպիսով, կարելի է եզրահանգել, որ խոշոր հարկատուների կողմից հարկային մուտքերի ավելացման համար անհրաժեշտ է միջոցառումներ ձեռնարկել հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման համար, բացահայտել ՀՀ-ում սահմանված հարկատեսակների հարկման բազաների ընդլայնման, դրանց գործադրման մեխանիզմների կատարելագործման արդյունավետ ուղիները և մշակել այնպիսի մեթոդներ ու մոտեցումներ, որոնք մեծապես կնպաստեն ստվերային տնտեսության ծավալների կրճատմանը, պետական գործառույթների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների կենտրոնացմանը և հանրապետությունում գործարար միջավայրի բարելավմանը:

Գրականություն

- «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք:
ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից հրապարակված 1000 խոշոր հարկ վճարողների կողմից վճարված հարկերի հաշվետվություններ, 2016-2021 թթ.:
- Киреенко А., Орлова Е., Баженова В. 2019, Налоговое администрирование крупных налогоплательщиков: мировые тенденции и особенности российского опыта, Вестник УрФУ. Серия экономика и управление, т. 18, N 1, с. 104-126.
- Соловьева Н. 2017, Соотношение прямых и косвенных налогов в налоговой системе государства и тенденции его изменения, Экономика: вчера, сегодня, завтра, т. 7, N 1, с. 216-226.
- Belz T., Hagen D., Steffens Ch. 2019, Taxes and Firm Size: Political Cost or Political Power?, Journal of Accounting Literature, vol. 42, p. 1-28.
- Farnsworth K., Fooks G. 2015, Corporate Taxation, Corporate Power, and Corporate Harm, Howard Journal of Criminal Justice, vol. 54, N 1, p. 25-41.
- IMF 2019, Corporate Taxation in the Global Economy, Policy Paper No. 2019/007, March 102019, 91 p.

- IMF 2019, World Economic Outlook: Growth Slowdown, Precarious Recovery, Washington, DC, April 2019, 216 p.
- Kopp E., Leigh D., Mursula S., Tambunlertchai S. 2019, U.S. Investment since the Tax Cuts and Jobs Act of 2017, IMF Working Paper no. WP/19/119, Washington DC, May 2019, 37 p.
- Piketty T., Saez E., Zucman G. 2018, Distributional National Accounts: Methods and Estimates for the United States, Quarterly Journal of Economics, vol. 133, Issue 2, p. 553-609.
- Smith A. 1937, An Inquiry into the Nature and Causes of the Wealth of Nations, New York, 1006 p.

ԽՈՇՈՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՐԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Կառլեն Խաչատրյան, Վարդան Ալեքսանյան

Ամփոփում

Սոցիալ-տնտեսական զարգացման գործում չափազանց կարևոր է հարկային քաղաքականության և հարկային համակարգի դերը: ՀՀ պետական բյուջեի եկամուտների շուրջ 95%-ը կազմում են հարկային եկամուտները և պետական տուրքերը, իսկ հարկային եկամուտների ավելի քան 70%-ը ապահովում են խոշոր հարկատուները: Ուստի հարկային բարեփոխումների իրականացման տեսանկյունից առանձնահատուկ կարևորություն է տրվում խոշոր հարկատուների հարկման մեխանիզմների կատարելագործմանը: 2016-2021 թթ. ՀՀ 1000 խոշոր հարկ վճարողների կողմից վճարված հարկերի ցուցանիշների վերլուծության հիման վրա բացահայտվել են ոլորտում առկա խնդիրները: Մասնավորապես՝ 1 մլրդ դրամից ավել և 500 մլն դրամից մինչև 1 մլրդ դրամ հարկ վճարող կազմակերպությունների քանակը տարեց-տարի աճում է, այնուամենայնիվ, էական տեղաշարժ չի նկատվում մեկ կազմակերպության վճարած հարկային մուտքերի միջին մեծությունում: 1000 խոշոր հարկատուների վճարած հարկային մուտքերի կազմում ուղղակի հարկերի փոքր տեսակարար կշիռը վերջին տարիներին սկսել է նվազել, որը նշանակում է, որ հարկերի ծավալների աճն ապահովվել է անուղղակի հարկերի հաշվին:

Բանալի բառեր՝ հարկ, հարկային քաղաքականություն, հարկային կարգավորում, հարկային վարչարարություն, ՀՀ հարկային համակարգ, հարկատուներ, խոշոր հարկ վճարողներ:

ПРОБЛЕМЫ НАЛОГООБЛОЖЕНИЯ КРУПНЫХ НАЛОГОПЛАТЕЛЬЩИКОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Карлен Хачатрян, Вардан Алексанян

Резюме

Роль налоговой политики и налоговой системы чрезвычайно важна в социально-экономическом развитии страны. Около 95% доходов государственного

бюджета РА обеспечивают налоговые поступления и госпошлины, а более 70% налоговых поступлений – крупные налогоплательщики. Поэтому в плане реализации налоговых реформ особое значение придается совершенствованию механизмов налогообложения крупных налогоплательщиков. Анализ показателей налога, уплаченных 1000 крупными налогоплательщиками РА за 2016-2021 гг., выявил наличие проблем в секторе. В частности, число организаций, уплачивающих налогов на сумму более 1 млрд драмов и от 500 млн драмов до 1 млрд драмов, растет из года в год, однако существенного изменения суммы налоговых поступлений, уплачиваемых одной организацией в среднем, не наблюдается. Небольшая доля прямых налогов в налоговых доходах, уплачиваемая 1000 крупными налогоплательщиками, в последние годы стала снижаться, а это означает, что увеличение налоговых объемов обеспечивается за счет косвенных налогов.

Ключевые слова – налог, налоговая политика, налоговое регулирование, налоговое администрирование, налоговая система РА, налогоплательщики, крупные налогоплательщики.

PROBLEMS OF TAXATION OF LARGE TAXPAYERS IN THE REPUBLIC OF ARMENIA

Karlen Khachatryan, Vardan Aleksanyan

Abstract

The role of tax policy and the tax system is significant in the country's socio-economic development. About 95% of the revenues of the state budget of the Republic of Armenia are provided by tax revenues and state duties, and large taxpayers provide more than 70% of tax revenues. Therefore, from the point of view of the implementation of tax reforms, particular importance is attached to improving the mechanisms for taxing large taxpayers. Based on the analysis of taxes paid by 1000 large taxpayers of the Republic of Armenia for 2016-2021, problems in the sector were identified. In particular, the number of organizations paying taxes of more than 1 billion drams and from 500 million drams to 1 billion drams is increasing from year to year; however, there is no significant change in the amount of tax revenues paid by one organization on average. The small share of direct taxes in tax revenue paid by the top 1,000 taxpayers has been declining in recent years, which means that indirect taxes increase tax volumes.

Key words – tax, tax policy, tax regulation, tax administration, RA tax system, taxpayers, large taxpayers.